ԱՐԱՐԱՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ԵՊՀ

ՏՈՂԱ ՎԱՍԻԼԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

ԺԱ. դարում բյուզանդական կայսրությունը ծանր դրության մեջ հայտնվեց սելջուկ-թուրքերի նվաճողական արշավանքների պատճառով: Կայսրության դիրքերը խարխլվեցին 1071 թ. Մանազկերտում սելջուկ-թուրքերից կրած ծանր պարտությունից հետո: Բյուզանդական կայսրության թուլացումից օգտվեցին զինվորական ծառայության մեջ գտնվող մի շարք գործիչներ, նրանց թվում եւ Փիլարտոս Վարաժնունին, որին հաջողվեց Կիլիկիայում հաստատված ստվարաթիվ հայության շրջանում գերակա դիրք գրավել եւ ստեղծել հսկայածավալ տերություն՝ Մարաշ (Գերմանիկ) կենտրոնով: Փիլարտոս Վարաժնունու ստեղծած իշխանապետության սահմանները ձգվում էին արեւելքից արեւմուտք՝ Եդեսիայից (Ուռհա) մինչեւ Կիլիկիայի արեւմտյան մասը, հյուսիսից հարավ՝ Մալաթիայից մինչեւ Անտիոք[1]: Փիլարտոս Վարաժնունու մահից հետո (1090 թ.) տարագիր հայության համախմբողի դերը ստանձնեց Փիլարտոսի հպատակ, հայության շրջանում հեղինակություն վայելող իշխան Գող Վասիլը: Նա երեսուն տարի (1082-1112 թթ.) կառավարելով՝ կարողացավ անառիկ պահել իր իշխանության սահմանները, որոնք տարածվում էին հյուսիս-հարավ ուղղությամբ՝ Մալաթիայից մինչեւ Պիր[2], իսկ արեւելք-արեւմուտք ուղղությամբ՝ Եփրատից մինչեւ Մարաշ՝ ընդգրկելով Քեսունը (իշխանության կենտրոնն էր), Ռապանը[3], Հիսն-Մանսուրը, Պեհեսնին, Հռոմկլան[4]: Գող Վասիլի մահից հետո

---

[1] Տես **L. Տեր-Պետրոսյան,** Խաչակիրները եւ հայերը, հ. Ա., Երեւան, 2005, էջ 419:

[2] **Պիր կամ Պիրեջիկ** - գավառ վերին (հայոց) Միջագետքում՝ Եդեսիայի շրջանում: Համապատասխանում է նոր ժամանակների Բիրեջիկին, տես ՀՀՇՏԲ, հ. Դ., էջ 340:

[3] **Ռապան -** բերդ եւ քաղաք վերին (հայոց) Միջագետքում՝ Եդեսիայի շրջանում: Արեւելքից եզերված էր Եփրատ գետով, ուներ հզոր շրջապարիսպներ, բուրգեր ու աշտարակներ. տես ՀՀՇՏԲ, հ. Դ., էջ 431:

[4] Տես **L. Տեր-Պետրոսյան,** նշվ . աշխ., ծնթ. 14, էջ 421:

(1112 թ. հոկտեմբերի 12-ին) նրա իշխանությունը ժառանգեց որդեգիրը՝ Տղա Վասիլը:

Բյուզանդական կայսրությունը ԺԲ. դարի առաջին կեսին ձեռնարկեց մի շարք քայլեր՝ վերականգնելու իր խաթարված դիրքերը Փոքր Ասիայի արեւելքում: Դրա արդյունքն էր Ալեքս Ա. Կոմնենոս կայսեր (1081-1118 թթ.)՝ Բոհեմունդ Անտիոքացու հետ կնքած Դեաբոլյան[5] պայմանագիրը (1108 թ.), որով Բոհեմունդը իր հպատակությունն էր հայտնում կայսերը, եւ Անտիոքի լատին իշխանության ներքո էր մնում Ասորիքը՝ Անտիոք կենտրոնով[6]: Չնայած դրան՝ խաչակիր ասպետները իրենց տեղում պահպանում էին ամբողջական իշխանություն, եւ հենց նրանց քաղաքականության հետեւանքով վերացան Եփրատացիքում[7] հաստատված հայկական իշխանությունները, որոնցից մեկն էլ Քեսունի իշխան Գող Վասիլի ժառանգորդ (որդեգիր) Տղա Վասիլի իշխանությունն էր:

Տղա Վասիլը եւ նրա ծագումը. *Տղա Վասիլի մասին հայտնի է, որ մոր կողմից սերում էր Կամսարական տոհմից[8]: Մատթեոս Ուռհայեցին, տալով Տղա Վասիլի նկարագիրը, նշում է, որ նա կրթվել ու դաստիարակվել էր Գող Վասիլի տանը, ինչպես հարազատ զավակ, եւ նրա իշխանությունը ժառանգեց քսանհինգ տարեկանում: Այդ առիթով Բարսեղ Կաթողիկոսը (1105-1113 թթ.) ժողով է գումարում, որին մասնակցում էին թե աշխարհիկ եւ թե հոգեւոր իշխանության ներկայացուցիչները: Որոշում է կայացվում իշխանությունը հանձնել Տղա Վասիլին. «Եւ տան զիշխանութիւն Վասլին՝ Տղայ Վասլին, որ էր մայրենեօք յազգէ Կամսարական, սնեալ եւ զարգացեալ ի տուն Վասլին՝ որպէս զորդի ի ծոցս հօր իւրոյ, գեղեցկատեսիլ եւ առիւծադէմ, յաջողակ եւ սրագլուխ եւ այր քաջ*

---

[5] Պատմագիտության մեջ այսպես է կոչվում պայմանագիրը՝ նկատի ունենալով կնքման վայրը, տեմ **E. Honigmann,** Die Ostgrenze des byzantinischen Reiches von 363 bis 1071, Bruxelles, 1935, S. 125-130:

[6] Տեմ **Ա. Բոզոյան,** Բյուզանդիայի արեւելյան քաղաքականությունը եւ Կիլիկյան Հայաստանը, Երեւան, 1988, էջ 74:

[7] Եփրատացիք կամ Եփրատացվոց «գավառ» Հյուսիսային Սիրիայում՝ Եփրատ գետի առափնյա տարածքներում: Հյուսիսից սահմանակից էր Երրորդ Հայքին, արեւմուտքից՝ Կիլիկիային, հարավից Հալեպին եւ Անտիոքին ենթակա շրջաններին: Նախկինում՝ մինչեւ Դիոկղետիանոս կայսեր 290 թ. վարչական վերափոխումները, կրում էր Կոմագենե անունը եւ համարվում էր առանձին պետություն: Եփրատացիք է կոչվել Հռոմի տիրապետության տակ անցնելուց հետո՝ պարզապես Եփրատի ափին գտնվելու պատճառով... Կիլիկիայի հայկական պետության ժամանակներում Եփրատացիք երկրամասը մտնում էր Մարաշի իշխանության մեջ. տեմ ՀՀՇՏԲ, հ. Բ., էջ 253:

[8] Տեմ **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 324:

եւ պատերազմող, ամաց քսան եւ հնգից: Զսա նստուցին յաթոռ մեծ իշխանին Վասլին, եւ նմա հնազանդեցան ամենայն զօրքն, վասն զի էր յոյժ առատաձեռն եւ մեծատուր, եւ եղեւ սիրեցեալ յաչս ամենայն զօրացն: Եւ արար միաբան ժողով Տէր Բարսեղ եւ տայ զամենայն իշխանութիւնն ի Տղայ Վասիլն, եւ եղեւ ուրախութիւն ի վերայ ամենայն տանն Հայոց»[9]*: Տղա Վասիլի վերաբերյալ նույնատիպ տեղեկության հանդիպում ենք նաեւ Սմբատ Սպարապետի «Տարեգրքում». «Մեռաւ Գող Վասիլն եւ թող սուգ մեծ ամենայն Հայոց քանզի մնացեալ իշխանքն Հայոց առ նա էին ժողովեալ, եւ աթոռ հայրապետութեան յաշխարհի նորա եդաւ, եւ էր խոստովանահայր նորա տէր Բարսեղ, զոր եդ հոգեբարձ իւր, եւ յանձն արար հաստատել ի տեղի իւր զՏղայ Վասիլին, որ էր սնեալ ի տան նորա որպէս զորդի իւր, եւ էր մայրենօք յազգէն Կամսարական»*[10]*: Իսկ Վարդան վարդապետի երկասիրության մեջ կարդում ենք. «Մեռաւ պարոն Վասիլն մեծ իշխանաց իշխանն հայոց, որ Աստուծոյ յաջողելովն տիրէր բազում բերդից եւ գավառաց: Եւ հոգայ զտուն նորա պատրիարգն Բարսեղ. եւ ետ զիշխանութիւնն ի տղայ Վասիլն յազգէ Կամսարական...»*[11]*: Միքայել Ասորին եւս պատմում է. «Քեսունում, Ռաբանում եւ Զոբար լեռան վրա էին գտնվում Գող Վասիլը, Տղա Վասիլը եւ Գող Վասիլի կինը, ով Տղայի ստնտուն էր եւ ոչ մայրը»*[12]*:*

Ղ. Ալիշանը, անդրադառնալով Տղա Վասիլին, նրան ներկայացնում է որպես Գող Վասիլի քրոջ որդի. «Վասն զի յետ մահուան մեծ իշխանին Գող Վասիլի (1111)՝ իր քեռորդին Տղայ Վասիլն իշխեց Քեսնոյ եւ սահմանաց, բայց ոչ յերկար...»[13]*: Ինչպես վերեւում տեսանք, աղբյուրները Տղա Վասիլին չեն համարում Գող Վասիլի քրոջ որդի: Մեր կարծիքով՝ Ղ. Ալիշանը միտում է ունեցել՝ Գող Վասիլին վերագրելու Կամսարական ծագում, այդ պատճառով էլ Տղա Վասիլին ներկայացնում է որպես նրա քրոջ որդի, քանի որ Տղա Վասիլի՝ մայրական կողմից Կամսարական լինելը կասկած չի հարուցում:*

---

[9] **Մատթեոս Ուռհայեցի,** նշվ. աշխ., էջ 324:

[10] **Սմբատայ Սպարապետի «Տարեգիրք»,** Վենետիկ, 1956, էջ 139:

[11] **Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ,** Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 153-154:

[12] Տես **Chronique de Michel le Syrien,** Patriarche jacobite d'Antioche (1166-1199), ed. et trad. en français par J.-B. Chabot, t. 3, Ernest Leroux, Paris, 1905, էջ 199:

[13] **Հ. Ղեւոնդ Ալիշան,** Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 97:

Տղա Վասիլի ջանքերը իշխանության պահպանման համար եւ նրա անկումը. *Տղա Վասիլն անմիջապես չստանձնեց իշխանության ղեկավարությունը: Հավանական է, որ սկզբում իշխանության ղեկը գտնվում էր Գող Վասիլի այրու ձեռքին: Այս մասին տեղեկանում ենք Իբն ալ-Ասիրի բերած տեղեկությունից, ըստ որի՝ Գող Վասիլի այրին տիրացավ իշխանությանը եւ պաշտպանվեց խաչակիրներից՝ հարաբերություններ հաստատելով Մոսուլի կառավարիչ Աքսունկուր ալ- Բուրսուկիի*[14] *հետ՝ նրան նամակ ուղարկելով: Իբն ալ- Ասիրը չեշտում է նաեւ այն հանգամանքը, որ Գող Վասիլի այրին շատ լավ էր վերաբերվում իր զինվորներին. «Հինգ հարյուր ութ թվական (7 հունիսի 1114 – 26 մայիս 1115): Այդ տարում վախճանվեց հայոց թագավորներից մեկը, որի անունն էր Գող Վասիլ (Քուվասիլ) եւ Մարաշի, Քեսունի (Քայսում), Ռապանի եւ այլ վայրերի տերն էր: Նրա իշխանությանը տիրացավ կինը ու պաշտպանվեց ֆրանկներից: Նա զինվորներին լավ վերաբերվեց եւ նամակ գրեց Աքսունկուր ալ Բուրսուկիին, որը Եդեսիան էր պաշարել, ու հրավիրեց նրա մերձավորներից մեկին, որպեսզի նրան ենթարկվի: Սա ուղարկեց Խաբուրի տիրոջը՝ ամիր Սունկուր Դազդարին, որին, երբ եկավ, նա (կինը) հարգեց եւ մեծ նվերներ տվեց: Նրա այստեղ գտնվելու ժամանակ ֆրանկների մի զորամաս եկավ ու բախվեց վերջինիս զորքի հետ, որը բաղկացած էր մոտավորապես հարյուր ձիավորից... Մահմեդականները հաղթեցին ֆրանկներին... Սունկուր Դազդարը վերադարձավ՝ նրա (կնոջ) կողմից նվերներ տանելով Մալիք Մասուդին եւ ալ-Բուրսուկին, եւ նա (կինը) հպատակություն հայտնեց»*[15]*: Փաստորեն Գող Վասիլի այրուն հաջողվեց իշխանությունը իր ձեռքում պահել մինչեւ 1115 թ.: Մատթեոս Ուռհայեցու մի տեղեկությունից էլ պարզ է դառնում, որ Գող Վասիլի կինը թագ է կրել, որը ի թիվս այլ ընծաների, տվել է Անտիոքի իշխան Տանկրեդի կնոջը. «... Եւ տարան Տանգրէի բազում տուրս ի տանէն Վասլին, բազում գանձս եւ դիպակս, ձիս եւ ջորիս, տարան եւ զթագն կնոջն Վասլին կնոջն Տանգրէի...»*[16]*:*

---

[14] Աքսունկուր ալ-Բուրսուկին սելջուկյան սուլթան Մուհամմադի կողմից ուղարկվել էր Մոսուլ՝ որպես ղեկավար. տես ՕԱՀՀՄ, 11, Արաբական աղբյուրներ, Բ. **Իբն Ալ-Ասիր,** թրգմն. բնագրից, առաջ. եւ ծանոթ.՝ Արամ Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1981, ծնթ. 279, էջ 241:

[15] Անդ, էջ 241:

[16] **Մատթեոս Ուռհայեցի,** նշվ. աշխ., էջ 324:

Գող Վասիլի հպատակներից մեկը՝ Քուրդիկը[17], ով նրա այրու հովանավորն էր եւ Տղա Վասիլի հակառակորդը[18], այրու միջոցով փորձում էր չեզոքացնել Տղա Վասիլին, ըստ էության, իշխանության գլուխ անցնելու նպատակով: Ինչպես տեղեկացնում է Միքայել Ասորին, Քուրդիկը դրդում է Գող Վասիլի կնոջը, որպեսզի ասորիներից գրավի Քեսունին մերձակա Կարմիր վանքը[19]: Գող Վասիլի այրին, ի տարբերություն իր ամուսնու, արտաքին քաղաքականության մեջ համագործակցեց թուրքերի հետ, ինչը հետագայում աղետալի հետեւանքների առաջ էր կանգնեցնելու իշխանությանը՝ նրա դեմ հանելով խաչակիրներին: Չնայած Գող Վասիլի այրին փորձեց իշխանությունն իր ձեռքում պահել, բայց քանի որ զորքը ենթարկվում էր Տղա Վասիլին, Կաթողիկոսը կազմակերպեց իշխանության հանձնումը նրան:

Իսկ իշխանության ղեկավարի դերում Տղա Վասիլի մասին առաջին տեղեկությունը վերաբերում է 1115 թ.: Նա, զգալով Անտիոքի Տանկրեդ իշխանից սպասվող վերահաս վտանգը, առավել նպատակահարմար գտավ համագործակցությունը շարունակել Աքսունկուր ալ-Բուրսուկիի հետ: Ինչպես երեւում է, Տղա Վասիլի արտաքին քաղաքականությունը էականորեն չէր տարբերվում Գող Վասիլի կնոջ քաղաքականությունից: Ամենայն հավանականությամբ, դա բխում էր ժամանակաշրջանի բովանդակությունից: Այս դաշինքը հարուցում է խաչակիրների դժգոհությունը, քանի որ նրանք չէին կարող հանդուրժել Տղա Վասիլի համագործակցությունը սելջուկների հետ, որը կարող էր վտանգավոր լինել իրենց համար: Արդեն 1115 թ. Եդեսիայի կոմս Բալդուին Բուրգացին, Տղա Վասիլի համագործակցությունը սելջուկների հետ պատրվակ դարձնելով, պաշարում է Ռապանը, սակայն Տղա Վասիլին հաջողվում է մեծ ուժեր կենտրոնացնել եւ ետ շպրտել հակառակորդին. «Յայսմ ամի կոմսն Ուռհայոյ Պաղտինն (իմա՛ Բալդուին Բուրգացի՝ Ա. Ս) պատերազմ յարուցանէր ի վերայ Վասլին իշխանին Հայոց այն, որ ունէր զիշխանութիւն գող Վասլին: Յայսմ աւուրքս գնաց Պաղտինն զօրօք ի վերայ ամուր քաղաքա-

---

[17] Քուրդիկը սերում էր Մամիկոնյան իշխանական տոհմից. տես **А. П. Каждан,** Армяне в составе господствующего класса византийской империи в XI-XII вв., Ереван 1975, էջ 14-17: Քուրդիկը զոհ է գնում իր դաշնակից Անտիոքի լատին իշխաններին, ովքեր թունավորում են նրան: Տես **G. Dédéyan,** Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés: Études sur les pouvoirs Arméniens dans le Proche-Orient Mediterranéen (1068-1150) vol . 2: De l'Euphrate au Nil: Le reseau diasporique, Lisbonne, 2003, էջ 1162:

[18] Տես անդ, էջ 1157:

[19] Տես **Chronique de Michel le Syrien,** նշվ. աշխ., էջ 199:

բերդին Ռապնայ եւ բազում աւուրս ի վերայ՝ ոչինչ կարաց առնել...»[20]: Զնայած այն հանգամանքին, որ Տղա Վասիլը կարողացավ հակահարված տալ Բալդուին Բուրգացուն, այնուամենայնիվ, նա գիտակցում էր, որ միայնակ երկար ժամանակ չէր կարողանալու դիմակայել: Այս պատճառով օգնություն է խնդրում Ռուբինյան հարստության ներկայացուցիչ, Կիլիկյան Հայաստանի իշխանապետ Թորոս Ա.-ից (1100-1129): Տղա Վասիլը ամուսնացած էր Թորոսի եղբայր Լեւոնի դստեր հետ: Այս հանգամանքն էլ ստիպեց նրան ընդունել Թորոս Ա.-ի հրավերը: Վերջինիս իշխանությունը արեւելքից սահմանակցում էր Տղա Վասիլի տերությանը (Տղա Վասիլի իշխանության տարածքը ընդգրկում էր Գող Վասիլի իշխանության վերոնշյալ սահմանները), հարավից հյուսիս ձգվում էր Ամանոսյան լեռների հյուսիսային ջրբաժանով, ավելի հյուսիս՝ հատում Ջեյհան (Ջիհուն) գետը, ապա ձգվում Կիլիկյան կենտրոնական Տավրոսի հյուսիսարեւելյան հատվածի գագաթնագծով: Թորոս Ա.-ի իշխանության ներքո էր գտնվում Անաբարզան (Անարզաբա[21]) (իշխանության կենտրոն), իսկ Ուսամա իբն Մունկիզի վկայությունից պարզ է դառնում, որ Թորոս Ա.-ի իշխանության ներքո էին գտնվում նաեւ Մամեստիան (Մոպսուեստիա[22]) եւ Ադանան[23]: Միքայել Ասորին գրում է, որ Թորոս Ա.-ն իշխում էր ողջ Կիլիկիայում[24]: Նա հայությանը միավորելու նպատակով Տղա Վասիլին հրավիրեց իր մոտ, սակայն հեռուն գնացող նպատակներ ուներ: Նա ձգտում էր գերակա դիրքի բոլոր հայ իշխանների նկատմամբ, իսկ Կիլիկիայի եւ Եփրատ գետի վերին հոսանքի շրջակա գավառներում հաստատվել էր ստվարաթիվ հայություն, ուստի դիմեց խորամանկության:

Տղա Վասիլը գնում է Թորոս Ա.-ի մոտ, բայց վերջինս ձերբակալում է նրան եւ տանում Եդեսիա՝ Բալդուին Բուրգացու մոտ: Բալդուինի համար ստեղծվում է հիանալի հնարավորություն՝ տիրանալու Գող Վասիլի

[20] **Մատթեոս Ուռհայեցի,** նշվ. աշխ., էջ 336-337:

[21] **Անարզաբա** - քաղաք Կիլիկիայի դաշտային մասում: Գտնվում է Սսից մոտ 25 կմ. հարավ-արեւելք՝ Սաուրան եւ Սիս գետերի մեջ ընկած հարթավայրում: Կիլիկիայի Ռուբինյան Թորոս Ա. հայ իշխանը 1104 թ. գրավում է Անարզաբան: Տես ՀՀՇՏԲ, հ. Ա., էջ 250-251. հմմտ. **Հ. Միքայէլ վրդ. Յովհաննէսեան,** Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները, Վենետիկ 1989, էջ 140-157:

[22] Դաշտային Կիլիկիոյ երեք գլխաւոր քաղաքներէն մէկն էր **Մսիս կամ Մամեստիա,** որ կը գտնուի Ճիհուն գետի արեւմտեան ափին վրայ. իր հիւսիսը ունի Անարզաբայի գաւառը, իսկ արեւմուտքէն՝ Ատանայի գաւառը: Ճիհուն եւ Սիհուն գետերուն միջեւ ընդարձակ դաշտագետին մը կը տարածուի եւ կը հասնի մինչեւ Այասի ծովափը: Տես «Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները», Հ. Միքայէլ Վրդ. Յովհաննէսեան, նույն տեղում, էջ 334-341:

[23] Տես **Усама ибн Мункиз,** Книга назидания, թրգմ. М. А. Салье, Москва, 1958, էջ 297:

[24] Տես **Chronique de Michel le Syrien,** tr. par. Chabot, I-III, Paris, 1900-1910, էջ 227:

տարածքներին: Նա այնքան ժամանակ չազատեց Տղա Վասիլին, մինչեւ որ վերջինս չհամաձայնվեց հանձնել իր տարածքները նրան: 1116 թ. Տղա Վասիլը, ծանր խոշտանգումների ենթարկվելով Բալդուին Բուլդացու կողմից, ստիպված էր իր տարածքները զիջել: Ազատ արձակվելուց հետո նա մեկնում է Կոստանդնուպոլիս. «Յայնժամ գնաց Վասիլն առ մեծ իշխանն Հայոց, որ կոչէր Լեւոն, որդի Կոստանդնեայ՝ որդւոյ Ռուբենայ՝ եղբայր Թորոսի եւ կին առեալ էր զդուստր նորա. Յայնժամ Թորոս եղբայր Լեւոնի կոչեաց զտղայ Վասիլն եւ նենգութեամբ կալաւ զնա եւ տայր ի Պաղտինն ի յՈւռհայոյ կոմսն: Եւ նա գազանաբար ի խոշտանգանս արկանէր զայրն քաջ եւ զհզօր պատերազմող եւ բռնութեամբ առեալ ի նմանէ զամենայն գաւառն եւ խափանեաց զիշխանութիւնն Հայոց ի յայնմ աշխահէն: Եւ Վասիլն գնաց առ Լեւոն աներն իւր եւ անտի յարուցեալ գնաց ի Կոստանդնուպոլիս. եւ արար նմա թագաւորն Հոռոմոց մեծ ընդունելութիւն եւ ամենայն զօրաց իւրոց»[25]:

Կոստանդնուպոլսում նրան ջերմ ընդունելություն են ցույց տալիս: Տղա Վասիլի հետ էր նաեւ իր զորքը: Այս հանգամանքով պետք է պայմանավորել կայսրությունում նրան լավ ընդունելություն ցույց տալը: Հանձինս Տղա Վասիլի եւ իր զորքի՝ կայսրությունը ձեռք էր բերել նոր ուժ, որին հարողները կայսրությունում հայտնի դարձան Կոկովասիլներ անվամբ: Ա. Կաժդանը գրում է, որ նրանք Մանուել Ա. Կոմնենոս կայսեր (1143-1180 թթ.) զորքերի կազմում են եղել 1160 թ.[26]:

Պետք է ենթադրել, որ Տղա Վասիլի՝ Կոստանդնուպոլիս գնալը եւ կայսրությունում զինվորական ծառայության անցնելը պատահական չէր, ըստ երեւույթին, սկզբնական հատվածում Տղա Վասիլը ձգտում էր նորից օգնական ուժեր գտնել եւ ի դեմս կայսրության՝ նոր դաշնակից ձեռք բերել:

---

[25] **Մատթեոս Ուռհայեցի,** նշվ. աշխ., էջ 337:
[26] Տես **А. П. Каждан,** նշվ. աշխ., էջ 43:

РЕЗЮМЕ

В результате сельджукских походов в конце XI века Византийская Империя оказалась в трудном положении. От ослабления империи воспользовались некоторые армянские князья, которые служили в византийской армии. Им удалось создать в Киликии, вокруг города Мараша, армянское княжество, которым правили сначала Пилартос Варажнуни, а потом - Гох Васил. После смерти последнего власть перешла к его преемнику Тга Василю, который правил около трех лет (1115-1117 гг.), так и не сумев развить достижения его предшественников. Власть была утеряна из-за неосторожной внешней политики, чем и воспользовались крестоносцы, а также из-за политики князя Киликийской Армении Тороса I, который любой ценой пытался объединить армянские княжества в рамках единного государства.

SUMMARY

Due to the Seljuk invasions at the end of the 11th century the Byzantine Empire appeared in difficult state. From the weakness of the Empire benefited some Armenian noblemen who were in charge of the Byzantine army. They managed to create in Cilicia, around the city Marash, an Armenian principality to be ruled first by Pilartos Varazhnuni and than by Gogh Vasil. After the death of Gogh Vasil the power passed to his successor Tgha Vasil, who ruled ca. three years (1115-1117). However Tgha Vasil could not develop the achievements created by his predecessors. The power was lost from the one hand due to unskillful foreign policy, from which benefited the Crusaders, and from the other hand due to the policy of Toros I, prince of Cilician Armenia, who tried to unite at all costs the Armenian principalities in frameworks of a united state.